

«ՈՒՄ» ՀՅՈՒՂԻ ՄԻ ԲԱՐԲԱՒ «ԿԸ» ՀՅՈՒՂԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Բուրգուրի բարբառը դեռևս գիտական ուսումնասիրության չենթարկված բարբառներից է։
Հստ հայ բարբառների ձևաբանական դասակարգման այն պատկանում է ում ճյուղին։ Գրա-
բարի համեմատ ունի պայթական բաղաձայնների երկուստիճան ձայնեղազուրկ սիստեմ։

Բուրգուրի բարբառն իր նրանգավորմամբ մոտ է Սյունիք-Ղարաբաղի բարբառների խոս-
վածքներին, սակայն ձևաբանական և հնչյունաբանական մի շարք առանձնահատկություններով
(և մանավանդ բառապաշարով) զդալիորեն տարբերվում է նրանցից։ Երկար ժամանակ՝ շուրջ
300 տարի, այն դտնվել է իր սերած միջավայրից՝ Սյունիքից կամ Ղարաբաղից հեռու, կը ճյու-
ղի բարբառների շրջապատում և, քնականաբար, այդ միջավայրն էլ իր դրոշմն է դրել Բուրգուրի
բարբառի հետագա զարգացման վրա։

Մինչև 1915 թ. հայկական եղեռնը այս բարբառով են խոսել Արևմտյան Անատոլիայի Բուր-
գուր քաղաքի հայ դաղութում, որն ունեցել է մոտ 2000 բնակիչ։

Մասսայական ջարդերի ու տեղահանության հետևանքով, Բուրգուրի բարբառն անցել է մա-
հացած հայ բարբառների շարքը։ Այժմ երևանում բնակվող 30—35 բուրգուրցի ընտանիքներում
այդ բարբառով տարեց մարդիկ են միայն խոսում, իսկ մյուս քաղաքներից կամ հատուկենտ
ընտանիքներ են փրկվել, կամ բուրն էլ ջարդերի զոհ են դարձել։

Բուրգուր քաղաքը գտնվում էր Փոքր Ասիա թերակղզու հարավ-արևմուտքում՝ համանուն
լճից արևելք։ Բուրգուրի հայ դաղութը հիմնադրվել է XVII դարի սկզբին, Շահ-Աբասի բռնա-
գաղթից հետո։ Որոշ վերապահությամբ այս կարծիքն ընդունում է նաև ակադեմիկոս Հ. Աճառ-
յանը, ասելով. «Պուրտուր և էոտեմիշ գաղթել են Ղարաբաղից ժէ դարում կամ ավելի ուշ»։

Իրենք՝ բուրգուրցիները, պատմում են, որ իրենց պապերը Թուրքիա են գաղթել Պարսկաս-
տանից՝ Շահ-Աբասի հատուկ ֆերմանով (հրամանով), «մեծ սովից» հետո (խոսքը երկրորդ՝
1607 թ. մեծ սովի մասին է, որովհետև առաջինը 1577-ին էր)։ Այդ հրամանը մինչև 1915 թ.
հայկական եղեռնը գտնվել է բուրգուրցի Փիլիպոս Առաքելյանի մոտ, որը և հայտնեց մեզ նրա
բովանդակությունը բեյրութից։

Այսպիսով, պարզվում է, որ շուրջ 300 տարի բուրգուրցիները բաժանվել են իրենց սերած
միջավայրից, նրանց կյանքն ընթացել է կո ճյուղի այլևայլ բարբառների հարևանությամբ և վեր-
ջին դարում՝ ատկապես արևմտահայ գրական լեզվի ազդեցության ներքո։

* *

Առաջին անգամ Բուրգուրի հայ գաղութի բարբառի մասին տեղեկություններ է տվել ակա-
դեմիկոս Հ. Աճառյանը 1911 թ. լույս ընծայած իր «Հայ բարբառագիտություն» գրքում։

«Փոքր Ասիո մեջ Զմյուռնիայի և Այտրնի քովերը հին հայ գաղթականություն մը կա, որ մեկ-
երկու դար առաջ Ղարաբաղեն հեռանալով այս տեղերը հաստատուեր է։ Թեև հիշյալ գաղթա-
կանության մեծագույն մասը տաճկախոս դարձած է, բայց երկու տեղ, այն է՝ Պուրտուր և էոտե-
միշ, դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կպահեն»։

Երկրորդ անգամ Բուրգուրի բարբառի անվանը հանդիպում ենք նույն հեղինակի «Դավա-
ռական բառարան»-ի (1913) բարբառների ցանկում, իսկայն, ցավոք սրտի, 30000 բառ ու ոճ
ընդգրկող այդ հարուստ բառարանում Բուրգուրի բարբառից ընդամենը 12 բառ է զետեղված։

Ապա 1951 թ. իր «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում (էջ 391) ակադ. Հ.
Աճառյանը, վերստին անդրադառնալով այդ երկու գաղութների խոսվածքներին, որևէ նոր բան
ի ավելացնում և կրկնում է 40 տարի առաջ արտահայտած միտքը։

1 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա — Նոր-Նախիջևան, 1911, էջ 64-

2 Նույն տեղում։

Իսկ պահել են արդյոք բուրդուրցիներն ու էոդեմիշցիները իրենց բարբառը: Պետք էր որոնել: Ակադ. Ա. Ղափրյանի առաջարկությամբ սկսած 1955 թ. համառորեն որոնումներ էին կատարվում բուրդուրցիներ և էոդեմիշցիներ հայտնաբերելու ուղղությամբ, և մեր երկարամյա որոնումները պսակվեցին հաջողությամբ:

Պարզվեց, որ գանազան ժամանակներում Երևան ներգաղթած 30—35 բուրդուրցի ընտանիքներ ղեկն օգտագործում են իրենց բարբառը միմյանց հետ խոսելիս, իսկ էոդեմիշցիները՝ ոչ:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց նաև, որ Արևմտյան Անատոլիայում հիմնադրված Սյունիք-ղարսրադյան գաղութները ոչ թե երկուսն էին՝ Բուրդուրը և էոդեմիշը, այլ առաջից ավելի, որոնց մեծ մասը նույնպես «անվթար» պահպանել էր իրենց բարբառը:

Ուսումնասիրությունների հենց սկզբում հաստատվեց, որ վերոհիշյալ գաղութներից ոչ բոլորն են նույն մակարդակով պահպանել իրենց մայրենի բարբառը (ոմանք բնավ չեն պահպանել) և, բնականաբար, մեր ուշադրությունը բևեռացինք այդ տարրեր մակարդակների պատճառները հայտնաբերելու վրա ևս:

Այսպիսով, Բուրդուրի բարբառի նկարագրությանը գուզրեթաց մեր ոչ երկրորդական նպատակը դարձավ նաև ընդհանրապես բարբառների քայքայումն արագացնող ազդակների պարզաբանումը:

Իսկապես, շատ հետաքրքիր է իմանալ, թե նոր միջավայր տեղափոխված բարբառների ու հատկություններն են ամենակենսունակը, որոնք վաղանցուկ Ոռտեղի՞ց է սկսվում արդյոք փոփոխությունը. ձևաբանությունի՞ց, թե՞ հնչյունաբանությունից: Գուցե միաժամանակ են հանդես գալիս նոր օրինաչափությունները և՛ քերականության, և՛ հնչյունաբանության մեջ, առանց նախորդելու մեկը մյուսին:

Խոսքն այստեղ ոչ թե «ներքին» փոփոխության՝ բնաշրջության մասին է (որը թեև դանդաղ, քայքայ առկա է ամենուրեք, թե՛ դրական նորմավորված լեզվում և թե՛ բարբառներում), այլ այն արտաքին ազդեցությունների մասին, որոնք գումարվելով այդ «ներքին» էվոլյուցիային, ավելի սրընթաց ու շեշտակիորեն են փոխակերպում տվյալ բարբառը՝ մայր բարբառի հետ համեմատած: Ահա թե ինչու նոր բարբառի ձևավորման հարցը քննելիս առաջինը շրջապատող պայմանների (իմա՝ բարբառների) և անկախ գոյության ժամանակաշրջանի հարցերն են լուսարանվելու: Որովհետև եթե մայր բարբառի էվոլյուցիայի համար որոշիչ գործոնը ժամանակն է մնում, իսկ շրջապատի ներգործությունը երկրորդական պայմանի գերումն է, ապա նոր շրջապատ ընկած բարբառի համար որոշիչ և հեղաշրջող դերը շրջապատի ազդեցությանն է պատկանում, ապա՝ ժամանակաշրջանի ներգործությանը:

Պարզ է, որ ինչպիսին էլ լինեն նոր միջավայրի պայմանները, նորեկ բարբառն անշուշտ ղեկն 50 տարի կարող է թեկուզ «իներցիայով» հարատևել՝ կրելով միայն աննշան կամ մասնակի փոփոխություններ:

Իրությունն այլ է, եթե նոր միջավայրում նույն բարբառի ներկայացուցիչները թաղերով են քնակվում և ամենօրյա շփման մեջ են միմյանց հետ, հեռու են քանակապես ստվար բարբառներից, իրենք են մեծամասնություն կազմում, գրական լեզվի ուսուցումը մասսայական չէ: Այդ բանը հատկապես ջայտույն է երևում, երբ նայում ենք գաղութների քարտեզին և վիճագրական տվյալներին:

Առավել նվազ են տուժել այն հայ գաղութների բարբառները, որոնց տնտեսական և կուլտուրական հարաբերությունները սերտ չեն եղել կենտրոնի՝ Պոլսի և Զմյուռնիայի հետ և այդ մեծահամայնք գաղութների բարբառների հետ ամենօրյա ու անմիջական շփումից հեռու են եղել (օրինակ Բուրդուրը և Իսփաթթան) և, ընդհակառակն, արագորեն են շքացել այն գաղութների բարբառները, որոնք անմիջապես գտնվել են կենտրոնի կամ կր ճյուղի առավել ուժեղ բարբառների՝ Պոլսի, Զմյուռնիայի ազդեցության ոլորտում (օրինակ, էոդեմիշի գաղութը գտնվել է ընդամենը 30—40 կիլոմետր Զմյուռնիայից հեռու և նա էլ ամենավաղն է կորցրել իր բարբառը): Իսկ Բուրդուրի բարբառի համեմատական անաղարտությանն ու միատարրությանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ նորանոր գաղթականություններ նրան չեն խառնվել:

Այս երևույթի անալոգիան ունենք նաև Արարատյան դաշտավայրում սփռված խոյի բարբառի օրինակով, որի ներկայացուցիչները շուրջ մեկ ու կես դար է, ինչ ընակվում են ում ճյուղի ամենահզոր՝ Արարատյան բարբառի անմիջական ազդեցության ներքո: Ավ ահա նկատվում է, որ այն գյուղում, ուր քանակապես գերակշռողները խոյեցիներն են, այնտեղ ղեռ անեղծ է մնացել բարբառը և կամ քիչ է տուժել, չնայած Արարատյան բարբառի և գրական համալրային լեզվի հեղինակավոր անդիմադրելի ներգործությանը, մինչդեռ այն գյուղերում, ուր խոյեցիները քա-

նականպես նվազ են եղել կամ ոչ թաղերով բնակված, արդեն ում ճյուղը կատարյալ տիրապետություն ունի:

Ահա թե ինչու Սյունիք-ղարաբաղյան երանգը նվազ փոփոխությամբ պահպանվել է հատկապես մեծահամայնք գաղութներում, Բուրդուրում (300 ընտանիք), Բուխում (200 ընտանիք) և Բսփարթայում (200 ընտանիք):

Իսկ կազմալուծվել է բարբառը էոդեմիչում, նազիլլիում, Անթալիայում, Դենիզլիում, ուր Բուրդուրից վերադադրած ընտանիքների թիվը 20—60-ից չի անցել:

Համեմատաբար միջին վիճակ է տիրում Դովլեհկի (95 ընտանիք), էմալուի (80 ընտանիք), Գուզջեի (52 տուն) գաղութներում:

Բարբառների մահացմանը նպաստել է նաև XIX դարի վերջերից և XX դարի սկզբից լայն տարածում գտած դպրոցն ու գրականությունը: Որտեղ մասսայական են եղել դպրոցները, այնտեղ էլ բարբառը համեմատաբար արագ է թխաթարվել: Եվ, ընդհակառակն, այն գաղութներում, ուր դպրոցն ու գրականությունը մասսայական չեն եղել, բարբառը նվազ է տուժել:

Բացի այդ պատճառներից, հիշյալ գաղութների լեզվի վրա իր դրոշմն է դրել բոնի ասիմիլյացիայի ամենակույզ գործոնը՝ թուրքերեն լեզուն: Այդ ազդեցությունից չի կարողացել խուսափել ո՛չ Բուրդուրի և ո՛չ էլ արևմտյան հայ բարբառներից որևէ մեկը:

Սկսվելով բառապաշարից, այդ ազդեցությունն ընդարձակել է իր ոլորտները՝ ընդհուպ մինչև ձևաբանական և հնչյունաբանական անալոգիայի երևույթները: «Այս փոփոխությունները կատարվում են լեզվի մեջ հասարակության կամքից անկախ, հաճախ սկզբնապես առանց նույնիսկ հասարակության կողմից գիտակցվելու»³: Փոխառյալ բառերն ու ոճերը պարտադրում են երբեմն փոխառու լեզվին նաև իրենց արտասանությունը՝ խաբխելով տվյալ լեզվի հնչյունաբանական ու բերականական կատեգորիաների օրինաչափությունները և ստեղծելով նորը:

Իհարկե, առանձին հնչյունաբանական և ձևաբանական տարրեր դեռևս նոր որակ չեն կարող կազմել: Սակայն աստիճանական փոփոխությունները ժամանակի ընթացքում մեծ քանակի հասնելով, բնական է, կարող էին լեզվին նոր որակ հաղորդել և, ի վերջո, նույնիսկ լուծել նրան փոխատու լեզվի մեջ, ինչպես կատարվել էր, օրինակ, արևմտահայ մի շարք գաղութներում դեռևս 1—2 դար առաջ (Ուշաք, Քյոթահիա, Աֆյոն-Գարահիսար և այլն):

Նոր միջավայրում Բուրդուրի բարբառը ձեռք է բերել նոր հատկություններ, մշակել նոր հնչյունաբանական ու ձևաբանական օրենքներ, որով զգալիորեն հեռացել է դարաբաղյան խոսվածքներից: Հետևաբար, ինչպես կտեսնենք քիչ հետո, ճիշտ չէր լինի նույնացնել Բուրդուրի բարբառը Ղարաբաղի բարբառի հետ կամ համարել նրա խոսվածքներից մեկը:

Ղարաբաղի բարբառի աշխարհագրական սահմանները թվարկելիս Հ. Աճառյանը Բուրդուրը և էոդեմիչը մտցրել է այդ բարբառի տիրապետության ոլորտի մեջ, մինչդեռ, ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, էոդեմիչի հայ գաղութը վաղուց էր կորցրել իր մայրենի լեզուն և դարձել թրքախոս կամ այլ բարբառներով խոսող: Այդ իսկ պատճառով էլ մենք ոչ մի «ղարաբաղախոս» էոդեմիչցի չկարողացանք հայտնաբերել, իսկ բուրդուրցիների բարբառը թեև «նման» է Ղարաբաղի բարբառին, սակայն դրանք նույնը համարել չի կարելի: Հենց թեկուզ Բուրդուրի բառապաշարում կան այնպիսի փոխառություններ, որոնք երբեք Ղարաբաղը չի ճանաչել և չէր էլ կարող. որովհետև դրանք կատարված են նոր շրջապատում հունարենից կամ իտալերենից. օրինակ՝ վարըլ — «տակառ», զամփանա — «զանգ», վափօր — «շոգենավ» և «շոգեքարշ» և այլն:

Բուրդուրի բարբառում դասական թվականները կազմվում են ինչի (inci) փոխառյալ մասնիկով, որն սկզբում առանձին չէր կարող գիտակցվել և իբրև մասնիկ փոխառնվել: Այդ մասնիկը թավանցել է թուրքերեն birinci, ikinci (առաջին, առաջնակարգ, երկրորդ) ձևերի հետ և այնուհետև տարածվել մյուս հայերեն արմատներից կազմվող դասականների վրա: Ահա մեկից մինչև տաս դասականների պատկերը Բուրդուրում. բիրինջի, իքինջի, իրեքինջի, չորսընջի, հինգինջի, վեցընջի, օխտընջի, ութընջի, ինընջի, տասընջի: Ինչի՞ն արդեն գիտակցվելով իբրև դասականակերտ ածանց, դրվում է երբեմն էլ հայերեն մեկ, երկու թվականների վրա: Օրինակ՝ մեկընջի, երկուընջի: Երբեմն էլ առանց տարբերակման, իբրև հոմանիշներ, օգտագործվում է թե՛ մեկը, թե՛ մյուսը, հաճախ նաև միևնույն նախադասության մեջ, ինչպես՝ օխտընջի դաթում հաքըրն ա կէնում, իքինջումը՝ մաքըրը — սյոթերորդ հարկում հորաքույրն է ապրում, երկրորդումը՝ մորաքույրը:

Խիստ հետաքրքրական է նաև այն փաստը, որ կյւ ճյուղի բարբառների մեծ մասը կորցրել է 70, 80, 90 թվականների հայերեն անվանումները. Ղարաբաղն ու Սյունիքը հայերենն են պահ-

3 է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963, էջ 309:

պանում, մինչդեռ Բուրգուրում նույնպես փոխառյալ յլքսիշ, սկֆսկն, տօխոստն ձևերն ենք տեսնում, իսկ հայերենները վտարված են։

Նոր շրջապատում թուրքերենից գատ Բուրգուրի բարբառը կրել է նաև հարևան զաղութներին, հետագայում էլ՝ զրական լեզվի ազդեցությունը։ Չէ՞ որ հաղորդակցության հեշտացման անհրաժեշտությամբ այլևայլ բարբառների ներկայացուցիչները ձգտում են իրենց արտասանությունը «մոտեցնել» կամ նմանեցնել տվյալ տերիտորիայի բնդհանուր հաղորդակցության միջոցին՝ զրական լեզվին, իսկ եթե աղափսին մեծ տարածում չունի, ապա հեղինակավոր և իշխող բարբառին։ Իհարկե, մենք այստեղ Վոեդեի լեզվահամահարթման և լեզվախառնման (Ausgleichung und Sprachmischung) վարկածը մեխանիկորեն չենք կարող ընդունել, որովհետև իրենց տեսակարար կշռով համեմատաբար փոքր բարբառները կրելով հանդերձ մեծ բարբառների (և զրական լեզվի իրավունք ձեռք բերած բարբառների) ազդեցությունը, իրենք ևս որևէ ձևով փոխադարձ ազդեցություն չեն կարող ունենալ։ Խեն բացառված չէ նաև մերվող բարբառից հաղթողին անցած որոշ ոճերի ու բառերի կենսունակությունը։

Նման վիճակում է գտնվել նաև Բուրգուրի բարբառը Պոլսի բարբառի ենթակայության տակ։ Ե՞նք եկատի ունենք նաև թուրքերենից կատարված փոխառությունները, որոնք կարող են լինել և՛ ուղղակի թուրքերենից, և՛ անուղղակի՝ այլ բարբառից։

Ի վերջո, եո ճյուղի միջավայրը ինչպիսի՞ ազդեցություն է թողել Բուրգուրի բարբառի վրա՝ հնչյունաբանության, ձևաբանության և բառապաշարի տեսակետից։

Մեր կարծիքով պիտի սկսել վերջինից, որովհետև ձևաբանական և հնչյունաբանական փոփոխությունները երբեմն կապված են փոխառությունների հետ։ Հենց փոխառություններն են բազմացնում հոմանիշները և իրենց հետ բերում բերականական ու հնչյունաբանական նոր օրինաչափություններ, որոնք երբեմն տարածվելով գործուն արժեք են ստանում և մոռացության մատնում հին օրենքները։

Փոխառություններով էլ բացատրվում են Բուրգուրի բարբառում առկա այն հնչյունաբանական զուգաձևերը, որոնց մի մասը դիտվել է իրրև նորամուտ օրինաչափություններ կամ շեղումներ զրականի ազդեցության տակ։ Իհարկե, դրանք միմյանցից տարբերելը հեշտ է։ Սյունիք-դարարալյան բառասկզբի խլացած ձայնեղների փոխարեն շնչեղ խուլերով սկսվող դուգահեռների գոյությունը Պոլսի խոսվածքների ազդեցությունն է։ Օրինակ՝ կլիրիլ-բրբէլ, կլէնդատ-քանքադու-դիժանիլ-փաժանէլ, տէս-թաս «դաս» և այլն։

Սովորաբար Սյունիք-Ղարաբաղի բարբառներում զրաբարյան ձայնեղ պայթականները բասկզբին իրրև կանոն վեր են ածվում խուլերի և հազվադեպ միայն շնչեղ խուլերի, մինչդեռ եո ճյուղի բարբառների ազդեցությամբ, ուր գերիշխում է շնչեղ խլացումը, Բուրգուրի բարբառն ունի ք>փ հնչյունափոխությամբ 11 բառ ավելի, գ>ք հնչյունափոխությամբ 13 բառ ավելի և դ>թ հնչյունափոխությամբ 15 բառ ավելի և այլն։

Բառապաշարային փոփոխությունների հետ, բնականաբար, փոխ են առնվում առանձին ոճեր, զարձկածքներ, և հետզհետև նախապատվություն տրվում է նրանց։ Օրինակ, հին սերնդի մոտ՝ «քնել» բառը բացակայում է. փոխարենը գործ է ածվում «թէք ընկիլ» կամ «թէնկիլ» զարձկածքը։ Սակայն նորը ստիպված երբեմն օգտագործում են նաև հին սերնդի «պահպանողական» ներկայացուցիչներն էլ. օրինակ՝

— Ակ, Մարյան, խի չէս բխին թւնկրցրնրմ բէշիկրմը։

— Ըխէն կաննէլ լլլիս ա, ուզում չի բեշիկումը քրնի։

— Նի յէլ կուտուրումը քրնացրու, դահա օբուդ ա,— պատասխանում է սկեսուրը արդեն մասամբ զրական արտասանությամբ։ Գրականից է մուծված նաև թրպրօց բառը, որ բարբառի օրենքներով տրպրօց պիտի դառնար, սակայն «շեղվել է» հիմնական օրինաչափությունից։

Մեկ այլ օրինակ ևս։ Բուրգուրի բարբառում «ծնող» հասկացողությունը դրսևորվել է «հէ զրնէրին» (հայրը + մայրը) բառով։ Սակայն իր շրջապատից դուրս բուրգուրցին, զգալով այդ բառի ասհասկանալիությունը մյուսների համար, օգտագործում է նաև զրականից վերցված «ծրնօխք» <ծնող բառը։ Առաջինն օգտագործում է տանը, երկրորդը՝ դրսում։ Բայց աստիճանաբար ավելի գործածական է դառնում նոր բառը, որը համընդհանուր ճանաչում ունի և հասկանալի է բոլորի համար։ Այս բոլոր երևույթները, ինչպես արդեն նշել ենք, շաղկապված են միմյանց հետ, և մի փոփոխությամբ են պայմանավորված հաջորդ փոփոխությունները ևս, նոր բառերի ու ոճերի ներմուծմամբ հնչյունաբանական և ձևաբանական նոր օրինաչափություններ են թափանցում բարբառ և խարխուլում նախկին օրենքները։ Բայց բոլոր դեպքերումն էլ ուշ տեղի տվողը բառասկզբի պայթականների արտասանությունն է՝ կամ ամեն մի լեզվի, բարբառի դեմքը որոշող բառաձայնական համակարգը։

ինչպես հայտնի է, ֆ-ն գրաբարում չի եղել: Այդ են վկայում օտար լեզուներից կատարված փոխառությունները, ուր ֆ-ն փոխարինվում էր փ-ով (օրինակ փիլիսոփա-ալփարէտ, Սոփուկլես) կամ հաղվաղեպ և-ով (օրինակ. հրաման, հրասախ և այլն):

Չնայած միջին հայերենում ֆ-ն հասարակական արժեք ստացավ, սակայն մինչև օրս էլ Սյունիքում կամ Ղարաբաղում և մի քանի այլ բարբառներում այն քաղաքացիական իրավուն- լից զուրկ է մնում:

Այլ է դրությունը արևմտյան բարբառներում և դրական լեզվում: Այսինքն՝ այն միջավայ- րում, ուր Բուրդուրի բարբառն էր ձևավորվում, ֆ-ն գիտակցվում էր բոլոր դեպքերում, թե՛ փո- խառյալ, թե՛ սեփական (ինքնաստեղծ) բառերում: Ժխտել չի կարելի այն փաստը, որ շրջապատի օրինակով է ֆ-ն քաղաքացիական իրավունք ստացել նաև Բուրդուրի բարբառում: Պ-ն այնպես է արմատավորվում Բուրդուրում, որ նույնիսկ հայերենի փ-ով սկսվող բառերի մի մասը (միա- վանկ բառերը) այժմ արտասանվում են ֆ-ով, օրինակ. ֆուղ<հող, ֆող<հոտ: Կա և հավաքել< ֆահաքիլ դրափոխությունը առաջացած բառը:

Մեր կարծիքով ֆ-ի առաջացումը կատարվել է 3 ճանապարհով: ա) Փոխառությունների մի- ջոցով, օր. ֆասուլ (—լորի), ֆուրուն (—փուռ), ֆիսղան (շրջագրեստ), ֆիրլնգ (ֆր. կողպեք), աֆ (ներումն), աֆերիմ (—կեցցե) և այլն: բ) Բնաձայնական արմատից կազմված ինքնաստեղծ բառերով՝ փրփրալ>ֆրֆրալ, փսփստացնել>ֆրստֆրստացնել, փշացնել>ֆրշացնել և այլն: գ) <>ֆ հնչյունափոխությամբ. օրինակ՝ հող>ֆուղ, հոտ>ֆող և այլն: Հետաքրքիր է նկատել, որ վերջինս երևանյան խոսվածքի բնորոշ կողմերից է: Խերես բռնապաղթի ժամանակ նրանք շփում են ունեցել երևանցիների հետ կամ Բուրդուր են տեղափոխվել նրանց հետ մի քանի ընտանիք Էրևանցիներ: Բացի բաղաձայնական փոփոխություններից զգալի փոփոխություններ են կրել Ղա- րաբաղի քոյանացած և շրթնայնացած ձայնավորները:

Արևմտյան Անատոլիայի շուրջ 10 հայ բարբառները (բացառությամբ Ասլանրեզ-Գէյլէ բարբառի) շունեն շրթնայնացած կամ քմայնացած ձայնավորներ, եթե ունեն էլ՝ 1—2 բացա- ուրկ օրինակների ձևով, ինչպես Պոլսի բարբառում՝ ցօրէկ, ցօրէն և այլն: Չունի և արևմտահայ գրական լեզուն: Մինչդեռ այլ է վիճակը Ղարաբաղի բարբառում, ուր առկա են այդպիսիք: Սա- ևայն Բուրդուրում նույնիսկ Աճառյանի օրենքով քմայնացած ա-երը վեր են ածվել գերազան- ցապես պարզ ձայնավորների. պարզեցված են նաև շրթնայնացած ու-երն ու օ-երը: Օրինակ՝ գրա- բարյան հարիր բառը Ղարաբաղում և Սյունիքում արտասանվում է հարուր, Բուրդուրում՝ հարիր, կամ հայիր, գրաբարում՝ ուրբաթ, Ղարաբաղում օրփաթ, Սյունիքում՝ օրփաթ, Բուրդու- րում՝ ուրփաթ: գրաբարում՝ պարուն, Սյունիքում և Ղարաբաղում՝ կյարունք, Բուրդուրում՝ քա- րուն և կ'էրուն, գրաբարում՝ դուրս գալ, Ղարաբաղում՝ տուս կյալ, Սյունիքում՝ տուս կալ, Բուրդուրում՝ տուս կյէլ, գրաբարում՝ լաւ, Սյունիքում և Ղարաբաղում՝ լավ, Բուրդուրում՝ լէվ և այլն:

Նույնպիսի օրինակներ կարելի է բերել նաև շրթնայնացված օ և ու ունեցող բառերից:

Ակնհայտ է այստեղ ևս արևմտյան գրական լեզվի ազդեցությունը, որի համաբանությամբ էլ ձայնավորներն աստիճանաբար ձեռք են բերել գրականին մոտիկ արտասանություն:

Իսկ ի՞նչ փոփոխություններ ենք նկատում ձևաբանության մեջ: Սկսենք հոգնակերտ մասնիկ- ներից: Ղարաբաղի բարբառում, ինչպես հայտնի է, գործածական էր մոտ 25 հոգնակերտ ածանց. ւնւ, էւ, նէ, էնի, աւ, նի, էնէ, աւէլ, օտ||օտ, էնւ, աւանւ, ունւ, աւնւ, օնւ, տանւ, էւ, էււ, իւ, վանւ, իտկնէ և այլն:

Մինչդեռ Բուրդուրում պահպանվել են դրանցից գերազանցապես Պոլսի բարբառին կամ արևմտյան գրականին մոտ եղող հոգնակերտները՝ էւ, նէւ, նի, էնւ, աւնւ, է: Իսկ մյուս հոգնա- կերտները իսպառ մոռացվել են կամ զրկվել կենսական արժեքից: Քսանհինգ հոգնակերտ մաս- նիկներից 5—6 մասնիկների պահպանում և այն էլ արևմտյան գրականին նմանները, — սա ոչ զուգադիպություն է, ոչ էլ պատահականություն, այլ ընդհանուր հաղորդակցության միջոցին՝ արևմտյան գրականին հասկանալի ու մոտ դառնալու ներքին մղման ու ձգտման արդյունք: Չնա- քանական արժեք ունեցող այդ երևույթը՝ հոգնակերտների կրճատումը, ոչ միայն համաբանու- թյան երևույթ է, այլև կապված է անմիջապես հնչյունաբանական այն օրինաչափությունների հետ, որոնք դադարել են արդեն բարբառի զարգացման այդ աստիճանում գործելուց: Խոսքը ձայնա- վորների ներդաշնակության օրենքի մասին է: Հին սերնդի մարդկանց բառապաշարում հավա-

բաղանդություն, զերդաստան, բարեկամություն ցույց տվող հոգնակերտները բազմաթիվ են՝ անհ. անհ. անհ. անհ. (Հայկազան, Ուֆանդան, Հովհաննիս, Թեթևան, Մեղրումբ, Մեղրումբ, Հայ- փետուն, Քրիստոս և այլն)։

Մինչդեռ նոր սերունդը գիտե միայն ինք-ը և վերահիշյալ բոլոր հավաքականներին կցում է բացառապես ինք հոգնակերտը՝ զրական լեզվի ազդեցության տակ, օրինակ՝ Հայկազան, Ուֆա- նան, Հովհաննիս, Թեթևան, Մեղրումբ, Մեղրումբ, Հայփետուն, Քրիստոս և այլն։

Մի շարք փոփոխություններ ենք նկատում նաև Բուրգուրի բարբառի հոլովման սխալմամբ։ Ինչպես ում ճյուղի բոլոր բարբառներում, այնպես էլ Բուրգուրի բարբառում հոլովները յոթն են, այսինքն՝ առկա է և ներգոյական հոլովը։

Սակայն նույնը չեն մնացել հոլովական վերջավորություններն ու հոլովումները, որոնք կրել են մասնակի փոփոխություններ այս կողմից ևս ցուցադրելով կր ճյուղին «նմանվելու» բար- բառիս ընդհանուր տեղեկները։

Եթե Սյունիք-Ղարաբաղում բացառական հոլովի վերջավորությունը ան-ն է (առանց վեր- լուծական ձևի), օրինակ՝ սարան, բարան և այլն, ապա Բուրգուրում գոյակտնը, ինչ հոլովման էլ պատկանելիս լինի, ունենում է միայն ին վերջավորությունը։ Այստեղ բացառականի ան-ն փոփոխությունը ոչ միայն ձևաբանական, այլև հնչյունաբանական արժեք է ներկայացնում, հե- տևաբար լեզվի մեջ մի երևույթի առաջացումը միշտ էլ մյուսի հետ է շաղկապված ու պայմա- նավորված։

Բուրգուրի բարբառում առկա է 7 հոլովում՝ ր(ը), ու, ան, օհ, օր, վա, ց։ Հատկապես տա- բառում ունեն «ու» և «ի(ը)» հոլովումները. առաջինն իբրև եզակի և հոգնակի թվով դրված գո- լականների հոլովակերտիչ, իսկ երկրորդը՝ միայն եզակի։ (Հիշենք, որ կր ճյուղում էլ է այդ- պես)։ Ինչպես ընդհանուր հայերենի աբելյան և արևմտյան զրական լեզուներում, այնպես էլ Բուրգուրում միօրինակացումն սկսվել է հոգնակի թվից, և առկա հոգնակերտ մասնիկից (որ կարող է նի, ֆ, նի, իր լինել) բոլոր հոգնակի գոյականները հոլովվում են «ու» հոլովմամբ։ Բացառությամբ հավաքականություն, ազգականություն ցույց տվող բառերի)։ Եզակի թվում, ինչպես նշեցինք, տիրապետող են դարձել ր(ը) և ու հոլովումները։ Ինչ վերաբերում է ան, ց, օհ, օր, սա հոլովումներին, ապա դրանցով միայն սահմանափակ թվով գոյականներ են հոլով- վում։ Երբեմն էլ հանդես են գալիս գուգաձևեր, որոնք քարացած ոճեր են և վկայում են բար- բառի անցյալի բազմաթիվ հոլովումների մասին։ Օրինակ՝ Օրինակ՝ կր ճյուղի ազդեցության տակ ներ- կայումս շարաթ բառը, ինչպես և ժամանակ ցույց տվող մյուս գոյականները, ենթարկվում է վա հոլովման։ Սակայն առանձին դարձվածքների ու քարացած ոճերի մեջ զգացվում է այդ բառերի նախկինում այլ հոլովման պատկանելը. օրինակ՝ շափիլն մեջ մին հէղ նէլըս կմ հէգուս կուշտու կամ՝ շափիլվան մէջ մին հէղ նէլըս էմ հէգուս կուշտու. ժարաթվա մեջ մեկ անգամ գնում եմ մորս մոտ։

Էրէկան էնգիզը ըրիսէնուն էմ տուվէլ։ Կամ՝ էրէկվան էնգիզը ըրիսէնուն եմ տուվել։ Քերեկվա ընկույզը երեխաներին եմ տվել։

Բուրգուրի հոլովական սխալմամբ որոշ կետերում նման է եղել կր ճյուղին, ինչպես, օրինակ, անականի հոգ ստանալու հատկությամբ և բացառականի ին վերջավորությամբ, մինչդեռ, երբ ում ճյուղի մնացած բարբառները բացառականը ից վերջավորությունն ունի։

Այս օրինակներից կարելի է հետևել, որ Բուրգուրի հոլովական սխալման ձևավորումը նույնպես զերծ չի եղել կր ճյուղի հոլովական ազդեցություններից։

Խոնարհման սխալմամբ ևս նկատվում են փոփոխություններ։ Սահմանականի անցյալ ան- կատար ժամանակը բաղադրվում է սահմանական ներկայից և իդի մասնիկից. օրինակ՝

ներկա		անցյալ անկատար	
պէնում ըմ	պէնում ընք	պէնում ըմ իդի	պէնում ընք իդի
պէնում ըս	պէնում ըք	պէնում ըս իդի	պէնում ըք իդի
պէնում ա	պէնում ըն	պէնում ա իդի	պէնում ըն իդի

Ամփոփելով այս փոփոխությունները, գալիս ենք այն եզրակացության, որ Բուրգուրի բար- քառը, շուրջ 300 տարի գտնվելով կր ճյուղի բարբառների և արևմտահայ զրական լեզվի միջա- վայրում, կրել է որոշ ազդեցություններ հնչյունաբանական, ձևաբանական տեսակետից և հատ- կապես բառապաշարի տեսակետից, միևնույն ժամանակ պահպանելով իր սերած միջավայրից ժառանգած ձևաբանական և հնչյունաբանական սրերները, հետագայում զարգացել է իբրև մի

նոր բարձրագույն՝ ձևավորման ընթացքում լանդես բերելով բոլորովին նոր՝ ներքին օրինաչափություններ, իսկ հիմնական տենդենցով՝ արևմտյան դրական լեզվին մոտենալու ձգտում:

Ինչպես հայտնի է, մոտ 70-ի հասնող իր բարձրադասերով հայերենն աշխարհի բարձրագույնագույն լեզուներից մեկն է: Մական ի տարբերություն մյուս լեզուների, հիմնականում պատմական անբարենպաստ հանգամանքների պատճառով, նրա բարձրադասերի կեսից ավելին գոյացել է պատմական Հայաստանի տերիտորիայից դուրս (Առտհալ, Զմյուռնիա, Նիկոմեդիա, Պոլիս, Ռոդոսթո, Մուրադաշ, Սվեդիա, Քեսար, Արամո, Սիվրի-հիսար, Սթանոզ, Բուրգուր, Թբիլիսի, Նոր-Ջուղա և այլն):

Քանի որ այս բոլոր գաղթօջախների հայությունը դուրս է եկել բուն Հայաստանից և ոչ մի նոր գաղթօջախի բարձրագույն նույնը չի մնացել իր սերած միջավայրի բարձրագույն հետ, ապա մնում է ենթադրել, որ այդ գաղթօջախների բարձրադասերը հիմնականում ձևավորվել են վերջին հարյուրամյակներում՝ նոր միջավայրի, նոր պայմանների ու հանգամանքների ազդեցության ներքո, ինչպես և ամենախայտարդեղ բարձրադասերի, խոսվածքների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի պատճառով տեղի է ունեցել քերականական և հնչյունաբանական տարբեր օրենքների «սինթեզում»: Սակայն նորաստեղծ բարձրադասերը լինելով տարբեր բարձրադասերի, խոսվածքների լեզվական իրողությունների մի համադրություն, միաժամանակ այդ օրինաչափությունների միջին թվաբանականը չեն, այլ քանակապես ստվար կողմի՝ հաղթանակած բարձրագույն նոր տարբերակը, որը հարստացել է տարրալուծված կողմի որոշ ոճերով, բառերով կամ երանգով:

Գոնե այդպես է ընթացել Արևմտյան Անատոլիայում և հատկապես Բութանիայում ձևավորված շուրջ 15 հայ բարձրադասերի գոյացման պատմությունը: Իմենը փաստերին, օրինակ, Նիկոմեդիայի բարձրագույն կազմված է երևանից, Բալուրից, Կամախից, Սերաստիայից և Ակնից գաղթած հայերի բարձրագույն խառնուրդից, բայց նոր բարձրագույն միայն որոշ նմանություն ունի Ակնի բարձրագույն:

Նույնն է պատմությունը Ասլանբեգի, Պոլսի, Զմյուռնիայի բարձրադասերի գոյացման վերաբերյալ:

Պետք է ենթադրել, որ հայերենի բարձրագույնագույն և բարձրադասացման երևույթը մի հարատև պրոցես է եղել: Միայն XIX դարի վերջերից սկսած մասսայական դպրոցներն ու գրական լեզուն թափանցում են ամենախույզ վայրերն ու ամենամոթ խրճիթները և ընդհանուր հայտարարի են բերում լեզվի հնչյունական ու ձևաբանական տարբերակները: Մինչև 1915 թ. եղևոնը Արևմտյան Անատոլիայի պատմական Բութանիա գավառում (որը մինչև Պոլիս է տարածվում) հայ բարձրադասերի թիվը հասնում էր շուրջ 12-ի, որոնցից մեծ մասի անունն անգամ գիտությունը ծանոթ չի եղել: Իրանցից մենագրությամբ հայտնի են Պոլսի և Ասլանբեգի բարձրադասերը (երկուսն էլ ակադեմիկոս Հ. Աճառյանի հեղինակություններն են): Իսկ մնացած 10 բարձրադասերին հայերենագիտությունը անտեղյակ է մնացել մինչև օրս: Մինչդեռ իրենց բազմահարուստ քերականական ու հնչյունաբանական հետաքրքիր օրենքներով (երբեմն եզակի ու հազվագեղ երևույթներով) նրանք ևս կարող էին անբացատրելի շատ երևույթների բանալի դառնալ:

Այս տեսակետից էլ, ինչպես նշեցինք, Բուրգուրի բարձրագույն քննությունից հանված եզրակացությունները տեսական ու դործնական մեծ նշանակություն ունեն ոչ միայն ինքն այդ բարձրագույն կազմավորումն ու զարգացումը, այլև պատմական Հայաստանից դուրս գոյացած մյուս բարձրադասերի կազմավորումը հասկանալու համար:

Վերջապես, ի մի բերելով վերոհիշյալ եզրակացությունները բարձրադասերի նոր գոյացման, զարգացման և մահացման վերաբերյալ՝ կարող ենք ենթադրել, որ բարձրադասերի անխառն վիճակը ապահովվում է գլխավորապես մեծաքանակ բնակչության և մեկուսացված համայնքների, թաղերի առկայության դեպքում, որ առօրեական շփումը միմյանց հետ ավելի մեծ է, քան այլևայլ բարձրադասերի ներկայացուցիչների հետ. այս դեպքում թուլանում է նաև գրական լեզվի ներդրությունը:

Բարձրադասերը տարրալուծվում են արագորեն, եթե նոր վայրում տեղաբաշխվում են ոչ թե թաղերով, այլ սփռված ձևով, եթե քանակապես նվազ են շրջապատի մյուս բարձրադասերից և եթե պարբերաբար նոր գաղթականությունների խոշոր խմբեր են խառնվում նրան:

Հենց այս պահից էլ սկսվում է նոր բարձրագույն գոյացումը համակցությամբ ապրող բարձրագույններից, որոնց մեջ ստվարաթիվ ներկայացուցիչների առաջին, երկրորդ և երրորդ սերնդի բերնում, ելնելով սեփական ինքնաբերական բարձրագույն հնչյունաբանական ու ձևաբանական օրենքներից, բեկվում է տվյալ բարձրագույն ամենաանսպասելի տարբերակներով: Այնուամենայնիվ, որևէ բարձրագույն կամ խոսվածքի մեջ ինչն է ամենակայունը և ինչն է ամենաարագ տեղի տվողը:

Որևէ բարրաոճի, խոսվածքի մեջ համեմատաբար կայուն կողմը ձևարանությունն է՝ նրա խոնարհումն ու հոլովումը, որոնք շատ երկար ժամանակամիջոցում միայն աննշան փոփոխություններ են կրում՝ այն դեպքում, երբ հնչյունարանության մեջ արդեն առկա են զգալի փոփոխություններ:

Այդ են տպացուցում հայերենի այն բազմաթիվ բարբառները, որոնք թեև ունեն միևնույն ձևարանությունը, սակայն պայթական բաղաձայնական սխտեմներով տարբեր են: Օրինակ՝ Համշենի և Նոր Նախիջևանի բարբառները բնեն թե՛ եռաստիճան, թե՛ երկաստիճան պայթական-բաղաձայնական սխտեմներ: Կարնո, Արարատյան բարբառները թե՛ քառաստիճան, թե՛ եռաստիճան պայթականների համակարգ ունեն: Իսկ Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներ նույնիսկ երկաստիճան բաղաձայնական սխտեմ ունեն: